Արձանագրություն թիվ ՀՀ-02/26

«Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների Պալատ» հասարակական կազմակերպության Հաշվապահական Հաշվառման հանձնաժողովի նիստ

16 հոկտեմբեր, 2026թ,

ք. Երևան

Նիստը տեղի ունեցավ առցնաց Zoom հարթակում, ժամը 16:00-ին: Նիստին մասնակցում էին Պալատի Հաշվապահական Հաշվառման Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահ Ավետիք Մովսիսյանը, անդամներ Աշոտ Ասրյանը, Մարիամ Ավետիսյանը և Նաիրա Մանուկյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին ֆինանսական հաշվառման ոլորտում առաջիկա փոփոխությունների պրակտիկ կիրառելիության հետ կապված խնդիրները: Մասնավորապես քննարկվել են առևտրային կազմակերպության հաշվային պլանի վերափոխված տարբերակի, ՖՀՄՍ 18, ՖՀՄՍ 19 և խմբագրված ՓՄԿ ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների կիրառման վերաբերյալ գործնական հարցեր:

Հանձնաժողովն արձանագրեց համապատասխան թեմաներով ՇՄԶ դասընթացների անհրաժեշտությունը, ինչպես նաև հաշվապահական ծրագրերի համապատասխան թարմացումների անհրաժեշտությունը:

Հանձնաժողովը, որպես իր առաքելության մաս, որոշեց Պալատի ղեկավարության հետ համաձայնեցմամբ կապ հաստատել շուկայում հաշվապահական ծրագրեր վաճառող և սպասարկող որոշ խոշոր ընկերությունների հետ: Հանձնաժողովի անդամները պատրաստակամություն հայտնեցին հնարվորության սահմաններում օգնել այդ ընկերություններին ծրագրերի համապատասխան թարմացումները պատշաճ իրականացնելու հարցում:

Նիստն ավարտվեց ժամը 17:00-ին:

Հանձնաժողովի Նախագահ՝ **Ա. Մովսիսյան**